

Կ Ա Ր Գ

Մարդու իրավունքների վերաբերյալ աշակերտական շարադրությունների երկրորդ հանրապետական մրցույթի կազմակերպան և անցկացման

1. Սույն կարգով սահմանվում են Մարդու իրավունքների վերաբերյալ աշակերտական շարադրությունների երկրորդ հանրապետական մրցույթի (այսուհետ՝ Մրցույթ) պայմանները, շարադրությունների ներկայացման, դրանց ստուգման, գնահատման և մրցույթի արդյունքների ամփոփման կարգը և ժամկետները, գնահատման չափորոշիչները:

2. Մրցույթը նվիրված է Զաբել Եսայանի ժառանգությանը: Մրցույթի գործընկերներն են «Թուֆենկյան բարեգործական հիմնադրամը» և «Հայկական հետազոտությունների ազգային ասոցացիան» (NAASR):

3. Մրցույթի կազմակերպումն իրականացնում է Արցախի Հանրապետության Մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմը (այսուհետ՝ Աշխատակազմ)՝ գործընկերների ներկայացուցչի մասնակցությամբ, իսկ շարադրությունների ստուգումը, գնահատումը և մրցույթի արդյունքների ամփոփումը՝ Մրցութային հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով):

4. Մրցույթին կարող են մասնակցել Արցախի դպրոցների 9-12-րդ դասարանների աշակերտները: Յուրաքանչյուր մասնակից իրավունք ունի ներկայացնել միայն մեկ շարադրություն:

5. Մասնակիցները շարադրությունները ներկայացնում են «Ինչու են մարդու իրավունքները կարևոր. իմ ապրած իրականությունը և Զաբել Եսայանի փորձառությունը» խորագրի շրջանակներում:

6. Մրցույթին ներկայացվող շարադրությունը պատրաստելու համար մասնակիցները պետք է օգտագործեն Զ.Եսայանի «Միլիդարի պարտեզները» ստեղծագործությունից քաղվածք պարունակող նախնական նյութը (http://www.ombudsnkr.am/docs/Zapel_Esayan.pdf):

7. Շարադրությունը պետք է լինի հայերենով՝ առավելագույնը 1200 բառ ծավալով:

8. Շարադրությունը ներկայացվում է տպագիր կամ ձեռագիր տեսքով՝ էլեկտրոնային (ombudsmannkr@gmail.com հասցեով) կամ թղթային (ք. Շուշի, Հախումյան 28 հասցեով) նամակի ձևով: Նամակը պետք է պարունակի մասնակցի անունը, ազգանունը, դպրոցի և դասարանի մասին տվյալներ, հեռախոսահամար:

9. Շարադրությունների ներկայացման վերջնաժամկետն է 2107թ. հոկտեմբերի 30-ը:

10. Շարադրությունը ստանալուց հետո եռօրյա ժամկետում Աշխատակազմը էլեկտրոնային նամակով կամ հեռախոսով հաստատում է այն ստանալու փաստը, ինչպես նաև տեղեկացնում սույն կարգի 4-7-րդ կետերին համապատասխանելու կամ չհամապատասխանելու մասին:

11. Հանձնաժողովի նախագահին Աշխատակազմը ներկայացնում է սույն կարգի 4-7-րդ կետերով սահմանված պահանջներին համապատասխանող բոլոր շարադրությունները՝ մինչև 2017 թվականի նոյեմբերի 6-ը:

12. Շարադրությունները գնահատվում են հետևյալ չափորոշիչներով՝

ա) Ուղղագրություն և քերականություն՝ 0-3 միավոր

բ) Աշխատանքի ձևավորում՝ 0-3 միավոր

գ) Նախնական նյութի իմացություն՝ 0-6 միավոր

դ) Ինքնուրույնություն (ինքնատիպություն)՝ 0-6 միավոր

ե) Վերլուծականություն՝ 0-6 միավոր

զ) Տեքստի կառուցվածք՝ 0-6 միավոր

13. Շարադրությունների ստուգումն ու գնահատումն իրականացվում է երկու փուլով:

14. Առաջին փուլում յուրաքանչյուր շարադրություն ստուգվում և գնահատվում է Հանձնաժողովի նախագահի կողմից նշանակված Հանձնաժողովի երեք անդամի կողմից: Առաջին փուլի արդյունքներով առավելագույն միավորներ ստացած 12 շարադրություններ անցնում են երկրորդ փուլ: Հավասար միավորների դեպքում երկրորդ փուլ անցած շարադրությունները որոշում է Հանձնաժողովի նախագահը:

15. Երկրորդ փուլում յուրաքանչյուր շարադրություն ստուգվում և գնահատվում է Հանձնաժողովի նախագահի կողմից նշանակված Հանձնաժողովի 6 անդամի կողմից: Ընդ որում, սվյալ շարադրության ստուգումը չի կարող հանձարարվել Հանձնաժողովի այն անդամին, որը ստուգել է այն առաջին փուլում:

16. Երկրորդ փուլի արդյունքներով առավելագույն միավորներ ստացած շարադրությունների համար սահմանվում են մեկական առաջին տեղի, երկրորդ տեղի և երրորդ տեղի մրցանակներ: Եզրափակիչ փուլ անցած մասնակիցները պարզևատրվում են ԱՀ Մարդու իրավունքների պաշտպանի հետ համաձայնեցմամբ գործընկեր կազմակերպությունների սահմանած անվանական հատուկ մրցանակներով, մյուս բոլոր մասնակիցները՝ հուշանվերներով:

17. Մարդու իրավունքների վերաբերյալ աշակերտական շարադրությունների առաջին հանրապետական մրցույթում առաջին, երկրորդ կամ երրորդ մրցանակների արժանացած մասնակիցը, եզրափակիչ փուլ անցնելու դեպքում, կարող է արժանանալ միայն անվանական հատուկ մրցանակի:

18. Մրցույթի արդյունքներն ամփոփվում են 2017 թվականի դեկտեմբերի 10-ին: